ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26 դեկտեմբերի 2018թ.

Քաղաք Իջևան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2018 թվականի դեկտեմբերի 26-ին ժ.11^{00}-ին կայացած

ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

1. Մարզի համայնքների 2018թ. Ինը ամսվա սեփական եկամուտների կատարողականների մասին:

Զեկուցող՝ Ն.Մելքումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ

2. Մարզում 2018թ. Գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերման արդյունքների մասին

Զեկուցող՝ Վ.Սուքոյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

3. ՀՀ Տավուշի մարզի ռազմավարության 2018թ. տարեկան աշխատանքային պլանով իրականացված մոնիթորինգի և գնահատման կիսամյակային հաշվետվություն:

Զեկուցող՝ Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ

4. Այլ հարցեր

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 3

ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

Նիստը վարում էր Տավուշի մարզպետ Վ.Ղալումյանը:

Ներկա էին մարզպետի տեղակալները, խորհրդականը, օգնականը, գլխավոր քարտուղարը, վարչությունների պետեր, բաժինների վարիչներ և պատասխանատու մասնագետներ:

Մարզխորհրդի 24 անդամներից բոլորը ներկա էին:

Ողջույնի խոսքով նիստը բացեց մարզպետ Վ.Ղալումյանը:

1.Մարզի համայնքների 2018թ. ինքը ամսվա սեփական եկամուտների կատարողականների մասին:

Զեկուցող՝ Ն.Մելքումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ

Զեկուցողը ներկայացրեց, որ 2018 թվականի դեկտեմբերի 26-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտների փաստացի մուտքը կազմել է 999.4 մլն. դրամ՝ նախատեսված 1050.0 մլն. դրամի դիմաց, կամ կատարվել է 95.2 %-ով: 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները ավել են հավաքագրվել 112.3 մլն. դրամով կամ 11.3 %-ով:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ դեկտեմբերի 26-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – տարեկան 186.4 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 183.5 մլն. դրամ կամ կատարվել է 98.4% - ով, որը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 18.3 մլն. դրամով:

Հողի հարկի մասով ցածր կատարողական ունեցող համայնքներն են՝ Լուսահովիտ 46.9%, Կողբ 53.7%, Ենոքավան 57.5%, Խաշթառակ 70.3%, Լուսաձոր

72.0%: Բարձր կատարողական ունեն Բերդ 108.3%, Այրում 107.0%, Դիլիջան 106.5%, Դիտավան 101.6% համայնքները:

- գույքահարկ - տարեկան նախատեսված 369.2 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 348.9 մլն. դրամ կամ կատարվել է 94.5 %-ով, որը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 5.3 մլն. դրամով:

Գույքահարկի մասով ցածր կատարողական ունեն հետևյալ համայնքները՝ Գետահովիտ 73.2%, Լուսաձոր 77.3%, Խաչթառակ 82.6%, Կիրանց 83.2%: Բարձր կատարողական ունեն Լուսահովիտ 113.1%, Բերդ 106.4%, Ականաղբյուր 104.7% համայնքները: Ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվում է կտրուկ միջոցներ ձեռնարկել նախատեսված գումարները մինչև տարեվերջ հավաքագրելու ուղղությամբ:

-տեղական տուրքեր – տարեկան նախատեսված 45.9 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 41.8 մլն. դրամ կամ կատարվել է 90.9 %-ով, որը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է հավաքագրվել 3.7 մլն. դրամով,

Տեղական տուրքերի մասով ցածր կատարողական ունեն հետևյալ համայնքները՝ Կիրանց 31.0%, Ենոքավան 54.0%, Ազատամուտ 60.9%, Աչաջուր 66.2%, Կողբ 67.3%, Դիլիջան 82.5%: Բարձր կատարողական ունեն Այրում 137.7%, Բերդ 132.9%, Գանձաքար 106.5% համայնքները:

- գույքի վարձակալությունից եկամուտներ – տարեկան նախատեսված 112.9 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 98.9 մլն. դրամ կամ կատարվել է 87.6 %-ով, որը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 8.1 մլն. դրամով,

Գույքի վարձակալությունից եկամուտների մասով ցածր կատարողական ունեցող համայնքներն են՝ Աչաջուր 51.9%, Խաչթառակ 64.7%, Իջևան 78.7%, Դիլիջան 79.8%: Բարձր կատարողական ունեն Բերքաբեր, Սևքար, Գետահովիտ, Ենոքավան, Լուսաձոր, Բերդ համայնքները:

- տեղական վճարներ – տարեկան նախատեսված 292.8 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 276.8 մլն. դրամ կամ կատարվել է 94.6%-ով, որը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 76.5 մլն. դրամով:

Տեղական վճարների մասով ցածր կատարողական ունեն հետևյալ համայնքները՝ Ենոքավան 20.2%, Լուսաձոր 70.7%, Խաչթառակ 73.0%, Գետահովիտ 81.5%: Բարձր կատարողական ունեն Բերդ, Աչաջուր, Գանձաքար, Դիտավան համայնքները:

ՀՀ Տավուշի մարզպետի համապատասխան որոշումներով մարտական գործողությունների հետևանքով չմշակվող հողատարածքների հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան հաշվարկների փոխհատուցման նպատակով 2018 թվականին հատկացվել է պետական

աջակցություն 62.0 մլն դրամ հողի հարկի գծով և 220.6 հազար դրամ գույքահարկի գծով:

Բերդ և Նոյեմբերյան համայնքների ղեկավարներին առաջարկվում է սեղմ ժամկետներում ավարտին հասցնել հատկացված աջակցության գումարների մուտքագրումը տեղեկատվական բազա և հաշվետվություն ներկայացնել մարզպետարան:

Առաջարկվեց.

Բերդ և Նոյեմբերյան համայնքների ղեկավարներին.

Սեղմ ժամկետներում ավարտին հասցնել հատկացված աջակցության գումարների մուտքագրումը տեղեկատվական բազա և հաշվետվություն ներկայացնել մարզպետարան:

2.Մարզում 2018թ. Գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերման արդյունքների մասին

Զեկուցող՝ Վ.Սուքոյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110762.8 հա, որից՝

վարելահող	-25588.4 հա
բազմամյա տնկարկներ	- 1902.2 հա, որից՝
խաղողի այգիներ	- 1198.1հա,
պտղատու այգիներ	- 704.1 հա
խոտհարքներ	- 9401.3 հա
արոտավայրեր	- 63065.6 հա
այլ	- 10805.4 հա

Բացի վերը նշվածը տնամերձերում ևս կան

բազմամյա տնկարկներ	- 2030.8 հա, որից՝
խաղողի այգիներ	- 158.9 հա,
պտղատու այգիներ	- 1871.9 հա

25588.4հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: 18377.7 հա փաստացի վարելահողից 2018թ. ցանքի տակ է դրվել 7503 հա:

Ոռոգվել է 4351 հա,օգտագործվել է 6.5 մլն.խմ ջուր,որի հասույթը կազմում է 71.7 մլն.դրամ:21.12.2018թ.դրությամբ գանձվել է 62.8 մլն.դրամ,որը կազմում է 88 տոկոս:

2018թ.արտադրվել է .

Հացահատիկ,հատիկաընդեղեն – 10586 տոննա

Բանջարեղեն – 5914 տոննա

Բոստան – 782 տոննա

Կարտոֆիլ – 13623 տոննա

Պտուղ – 9206 տոննա

Խաղող – 9914 տոննա

Ծխախոտ – 430 տոննա

Արևածաղիկ – 303 տոննա

Խոտ – 51142 տոննա

Ծղոտ – 629 տոննա

Ժամանակին և անկորուստ կատարվեց խաղողի բերքահավաքը: Արտադրված 9914 տոննայից մթերվեց 5736 տոննա խաղող /2017թ. 9804 տոննայից՝5106 տոննա/, այդ թվում՝

<<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ Բերդի մասնաճյուղ – 4078.3 տոննա

<<Երևանի շամպայն գինիների գործարան>> ԲԲԸ Դեբեդավանի գինու գործարան- 1054 տոննա

<<Իջևանի գինու և կոնյակի գործարան>> ԲԲԸ – 416.2 տոննա

<<Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ – 113.1 տոննա

<<Էկոգարդեն>> ՍՊԸ - 75 տոննա

Մարզի վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 934.3 տոննա պտուղ և հատապտուղ ու բանջարեղեն /2017թ. 726.4 տոննա/, որից.

Իջևանի գինու,կոնյակի գործարան ԲԲԸ – 570 տոննա

<<Էկոգարդեն>> ՍՊԸ /գ.Այգեձոր/ - 310.8 տոննա

<<Արթուր և Էդիտա>> ՍՊԸ /գ.Ջուջևան/ - 11.4 տոննա

<<Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ – 42.1 տոննա

Բացի մթերումները շուրջ 515 տ պտղից չիր է պատրաստվել: Շուրջ 1300 տոննա դեղձ, արքայանարինջ, թուզ, հոն, ելակ է արտահանվել արտերկիր:

2018թ.աշնանը մարզում կատարվել է շուրջ 4100 հա աշնանացան՝ 2017թ.3417 հա-ի դիմաց:

ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի N 1042-Ն որոշման համաձայն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին սոցիալական աջակցություն ստացող 22 սահմանամերձ բնակավայրերի շուրջ 2100 գյուղատնտեսական հողօգտագործողներին՝ փաստացի ցանված 2562 հա աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների համար որպես պետական աջակցություն հատկացվել է 153 մլն. 720000 դրամ:

2018 թվականի նոյեմբերի 29-ի N 1405 –Ն որոշման համաձայն մարզի 8 բնակավայրերի 2018 թվականին տարերային աղետների հետևանքով 50-100 տոկոսով տուժած 707.8 հա հողատարածքների համար 552 գյուղատնտեսական հողօգտագործողներին պատճառված վնասների մասնակի փոխհատուցման համար հատկացվել է 21մլն.604000 դրամ:

3.ՀՀ Տավուշի մարզի ռազմավարության 2018թ. տարեկան աշխատանքային պլանով իրականացված մոնիթորինգի և գնահատման կիսամյակային հաշվետվություն:

Զեկուցող՝ Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ

Զեկուցողը ներկայացրեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը:

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի զարգացման տեսլականն է՝ լինել մրցունակ արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ ու զարգացած զբոսաշրջային ենթակառուցվածքներ ունեցող մարզ, բոլոր տարածքներում ապահովելով համաչափություն և կայունություն:

Տեսլականին հասնելու նպատակով ՀՀ Տավուշի մարզի առկա իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանել են հետևյալ ռազմավարական նպատակները.

1) առկա ներուժի հիման վրա բոլոր տարածքների մրցունակության բարձրացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով թույլ զարգացած և սահմանամերձ տարածքներին, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա.
2) առավելագույն տարածքային համաչափության երաշխավորում և տնտեսության դիվերսիֆիկացիա.
3) տարածքային զարգացման քաղաքականության և փորձի բարելավում՝ ապահովելով տարածքային ու տեղական դերակատարների ակտիվ մասնակցությունը պլանավորման և իրականացման գործընթացներում:

Սահմանվել են զարգացման երեք առաջնահերթ գերակայությունները.

- Մինչև 2025 թ. ՀՀ Տավուշի մարզը կբարելավի իր մրցունակությունը և տնտեսության դիվերսիֆիկացիան՝ հասնելով նվազագույնը Հայաստանի միջինի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 60%-ին, կունենա 10%- ային կետով բարձր մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մարդիկ, քան 2015 թ., 10%-ային կետով ավելի բարձր ակտիվ կազմակերպություններ և ոչ գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղեր, քան 2015 թվականին:
- Մինչև 2025թ. ՀՀ Տավուշի մարզում կբարելավվի գործազրկության մակարդակը՝ դառնալով 10%-ից ցածր (համեմատած 2015 թ.12.1%-ի հետ) և աղքատության մակարդակը 25 %-ից ցածր (համեմատած 2015թ. 35.3%-ի հետ): Մարզի սահմանամերձ տարածքները չեն ունենա երկարաժամկետ գործազրկության և աղքատության կրկնակի ավելի բարձր %, քան մարզային միջինը:
- Մինչև 2025թ. ՀՀ Տավուշի մարզում կբարելավվեն տարածքային և տեղական դիմակայուն զարգացման կառավարման կարողությունները և համակարգերը. մարզային և համայնքային աշխատողների 85%-ը կստանա վերապատրաստման ծրագրեր՝ նվիրված մարզային/տեղական զարգացմանը, մինչ մարզի ամբողջ տարածքը կունենա խոշորացված 7 համայնք 2016թ. 40-ի փոխարեն:

2018թ. առաջին եռամսյակի ընթացքում մի շարք հանձնարարականներով պայմանավորված լրամշակվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն հաստատման է ներկայացվել ՀՀ Տավուշի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության իրականացման 2018 թվականի գործունեության ծրագիրը: Ծրագրում ընդգրկված են ոլորտների գերակա խնդիրները, ոլորտային միջոցառումները՝ պլանավորված բյուջեներով, ինչպես նաև տրամաբանական հենքը:

Ա.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արդյունաբերության աճը՝ շեշտը դնելով փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա, մասնավորապես վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների հիմնման/ընդլայնման վրա, մարզի ռազմավարությամբ առաջնահերթ սահմանվել է գերակայություն:

2018 թվականին խնդիր է դրվում բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում՝ բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երին և համայնքների գործարար ներկայացուցիչներին:

2018թ. մարզում փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացման ուղղությամբ ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից նախատեսվում են իրականացնել մի շարք ծրագրեր, այդ թվում՝

1) ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)
2) ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
3) ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն
4) ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում
5) ԵՄ համաֆինանսավորմամբ «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանում» ծրագրի շարունակություն:

2018թ. մարզում ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից նախատեսվել է իրականացնել ընդհանուր առմամբ 50.0մլն դրամի ծրագրեր

2018թ. ոլորտի բյուջեն կազմում է 1,300 մլն.դրամ, որից 1160 մլն դրամը՝ կապիտալ ծրագրեր, ***2018թ. 1-ին կիսամյակի փաստացի ներդրումները կազմել են 820,7 մլն դրամ,*** պլանավորվել է ստեղծել 680 աշխատատեղեր, այս պահի դրությամբ ստեղծվել է 416 հիմնական աշխատատեղ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետարանը համագործակցել է ՓՄՁ ԶԱԿ Տավուշի մասնաճյուղի հետ, աջակցություն է ցուցաբերվել միջոցառումների կազմակերպման ընթացքում, «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության» ծրագրի շրջանակներում կազմակերպվող դասընթացների մասնակցության համար իրականացվել է շահառուների հավաքագրում:

Մարզպետարանի կողմից աշխատանքներ են տարվում ներդրումային ծրագրերի շտեմարանի ձևավորման ուղղությամբ: ՀՀ մարզերում տնտեսական ակտիվությունը խթանելու, դրան ուղղված տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման, ՀՀ տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային–գործարար ծրագրերի հարթակի ստեղծման նպատակով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել մարզի 17 ներդրումային ծրագիր-առաջարկներ՝ պահանջվող ձևաչափով:

Մարզպետարան են դիմել գործարարներ չորանոցի հիմնման, կաթնամթերքի վերամշակման արտադրամասի վերազինման, զբոսաշրջային գոտու ընդլայնման, սպանդանոցի կառուցման ծրագրային գաղափարներով, որոնց աջակցություն է ցուցաբերվում գործարար ծրագրերի կազմման ուղղությամբ:

2018թ. մարզը շարունակել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով՝ տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

II.ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Կայուն զբոսաշրջության զարգացումը սահմանվել է որպես ՀՀ Տավուշի մարզի ռազմավարության հիմնական գերակայություններից մեկը, շեշտը դնելով հոգևոր, մշակութային, էքստրիմալ, գյուղական, ագրոտուրիզմի, ճանապարհորդական տուրիզմի և զբոսաշրջության այլ ճյուղերի վրա:

Դրա համար մարզը ունի բոլոր նախադրյալները, իսկ պետական, տարածքային և տեղական մարմինները ձեռնարկում են միջոցներ զբոսաշրջությունը դարձնելու մարզի տնտեսության զարգացման հիմնական ճյուղերից մեկը: Այդ ուղղությամբ 2017թ. պետական, միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կատարվել են մեծածավալ ներդրումներ, որոնք կշարունակվեն նաև 2018 թվականին: ***Զբոսաշրջության զարգացման նպատակով մարզպետարանը շարունակել է համագործակցել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջային պետական կոմիտեի, մարզի համայնքների և ՄԱԿ-ի կողմից հիմնած զբոսաշրջային կենտրոնի և ոլորտի այլ ներկայացուցիչների հետ: Առկա գաղափարները մշակվել և ներկայացվել են ՀՀ կառավարություն: :*** Ոլորտում նախատեսվել է 30 նոր աշխատատեղ, առաջին կիսամյակում ստեղծվել են շուրջ 67 նոր աշխատատեղեր: Զբոսաշրջության ոլորտի բյուջեն կազմում **է 2 359 000.0 հազ. Դրամ, առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմում է 717 մլն.դրամ**:

ԵՄ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ 2017թ. Մեկնարկել է <<Աջակցություն Դիլիջանին և հարակից բնակավայրերին>> ծրագիրը, որը շարունակվում է նաև 2018թ: Ծրագրեր են նախատեսվում նաև այլ միջազգային և տեղական կազմակերպությունների ինչպես նաև անհատ ներդրողների կողմից:

III.1. Կրթություն

Կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: 2018թ. ևս ուշադրություն է դարձվել կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, ինչպես նաև 12-ամյա կրթության, ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական, բուհական ընդունելության նոր քննական համակարգի ներդրմանը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 7-ի նիստի29.7/[431977]-17 N 51 հանձնարարականի 8-րդ կետի՝

Կրթական հաստատության կառավարման արդյունավետության և կրթության որակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման համար ՀՀ Տավուշի մարզում 2018 թվականին ևս նախատեսվում է.

մայրաքաղաքի առաջավոր հանրակրթական ուսումնական հաստատությունների /<<Այբ>> դպրոց, <<Քվանտ>> վարժարան/ հետ հեռավար դասերի անցկացում: Քանի որ մարզի հանրակրթական դպրոցներն ունեն լաբորատորիաների վերազինման կարիք, ուստի հեռավար դասերի ընթացքում կիրառվող փորձերը հնարավորություն են տալիս աշակերտներին որոշ չափով տեսական գիտելիքները լրացնել գործնականով:

2017թ. հունիսից Տավուշի մարզի Կողբ համայնքում մեկնարկել է <<Թումո>> ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի կառուցման աշխատանքները /485մլն.դրամ/, որը մարզի դպրոցականներին կտրամադրի յուրատեսակ ուսումնական փորձառություն՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

Մարզի 27 դպրոցում գործում է ռոբոտաշինության խմբակներ: <<Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության>> կողմից նման խմբակներ ունեցող դպրոցներին ի պահ տրամադրվել են համակարգչային տեխնիկա, ռոբոտաշինության համար նախատեսված ուսումնական և ավտոմատացման հավաքածուներ: 2018-2019թթ. Նախատեսվում է մարզի բոլոր դպրոցներում բացել ռոբոտաշինության խմբակներ:

2017թվականից մարզի բոլոր դպրոցները անցել են ներառական կրթական համակարգի: 2017 թվականից մարզի բոլոր դպրոցներում ներդրվել է <<Կայուն դպրոցական սնունդ>> ազգային ծրագիրը, որի տարեկան բյուջեն կազմում է մոտ 140մլն.դրամ :

ՀՀ պետական բյուջեի միջոցներից և համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում կշարունակվեն ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները. 2018թ. մոտ 330 ուսուցիչ կանցնի համապատասխան վերապատրաստում:

2018թ. մարզային ենթակայության կրթական ոլորտի ծախսերը կազմում է 5 263,2 մլն. դրամ, իսկ առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմում է 2255,8մլն.դրամ:

III.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր

2018 թվականինևս մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղվել է մարզում պետական մշակութային քաղաքականության իրականացմանը, մարզի մշակութային դերի բարձրացմանը, մշակութային ու հոգևոր ժառանգության պահպանմանը, ազգային արժեքների ու ավանդույթների վերականգմանն ու տարածմանը, պետական, ազգային ու այլ տոների, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, թանգարանների,

գրադարանների, մշակութային այլ օջախների նպատակային գործունեության ապահովմանը, կադրային քաղաքականության և մշակութային կրթության զարգացմանն ու առաջընթացին, հայ ընտանիքի բարոյական նորմերի պահպանմանը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը, երիտասարդության շրջանում տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

2018թ. առաջին կիսամյակին մարզում իրականացվել են 2 խոշոր՝ Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին և ՀՀ անկախության օրվան նվիրված միջոցառումներ/7.0մլն.դրամ/, ինչպես նաև փառատոններ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, գիտաժողովներ, համերգային և թատերական ծրագրեր:

Բացի համայնքային և պետական աջակցության ծրագրերը 2017թ. մարզում մասնավոր ներդրողների կողմից կառուցվել և վերանորոգվել են խաղահրապարակներ 25մլն.դրամ արժեքով:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով 2018թ. պետական բյուջեից հատկացվել է **49,0** մլն դրամ: Մարզում մշակութային միջոցառումների կազմակերպմանն աջակցելու համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է **3,21** մլն. դրամ:

Մարզի մարզիկները պարբերաբար մասնակցում են տարբեր մարզաձևերից մեծահասակների, երիտասարդների և պատանիների աշխարհի, Եվրոպայի և այլ միջազգային առաջնություններին: Մարզում տարբեր մարզաձևերից՝ ֆուտբոլ,ըմբշամարտ, սմբո, բռնցքամարտ, շախմատ և արևելյան մարտարվեստներից ունենք նշանակալի հաջողություններ ու ձեռքբերումներ:

Մարզում պետական երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման մարմինների, ՏԻՄ-երի, բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների, սպորտի և երիտասարդության հարցերով զբաղվող ՀԿ-ների և այլ մարմինների կողմից:

2018թ.մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի բյուջեն կազմել է շուրջ 383,7 մլն.դրամ, որից առաջին կիսամյակում իրականացվել է 161,0մլն.դրամի աշխատանքներ:

III.3. Առողջապահություն

Առողջապահության ոլորտի գերակայությունները ներառում են՝ հեռավոր գյուղական համայնքներում առողջության առաջնային պահպանման ծառայությունների բարելավում և մատչելիության բարձրացում, նեղ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի և ղեկավար բուժ անձնակազմի վերապատրաստում, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, վաղ ախտորոշման և լիարժեք բուժման ազգային ռազմավարության մասին հանրային իրազեկության բարձրացում, բուժ հաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավում: Այս միջոցառումներից շատերի իրականացումը շարունակական բնույթ ունի, բայց

հիմնականում կախված է դոնոր կազմակերպություններ իմիջոցների և Կառավարության շարունակական օժանդակության առկայությունից: 2014թ-ից մեկնարկել ու շարունակվում է ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, հիպերտոնիայի, շաքարային դիաբետի և կանանց նախաքաղցկեղային հիվանդությունների կանխարգելմանն ուղղված սկրինինգային ծրագրեր:

2017 թվականից Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի կողմից մեկնարկել է վերապատրաստման դասընթացներ:2017թ. Վերապատրաստվել են 38 բուժքույրեր: Բացի այդ առողջապահական հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով նույն ծրագրի շրջանակում կվերապատրաստվեն տնօրեներ և փոխտնօրեներ /2018թ. 14 հոգի/:

2018թ. վճարովի ծառայությունների աճ ապահովելու նպատակով իրականացվում են հետևյալ գործառույթները.

1) Ստվերային շրջանառության բացառում
2) Նոր տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրում:
3) Կադրային համալրում՝ վիրաբույժ, մանկաբույժ, գինեկոլոգ, անեսթեզիոլոգ և այլն
4) Մատուցվող ծառայությունների գների վերանայում
5) Պետական պատվերի ձևավորման եղանակի վերանայում՝ այն համապատասխան գործակցով կապելով վճարովի ծառայությունների հետ:

2018թ. ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 1480 000.0 հազ.դրամ, որից առաջին կիսամյակին իրականացվել է շուրջ 670մլն.դրամի աշխատանքներ:

III,4. Սոցիալական պաշտպանություն

2018թ. ՏԱՊ-ի շրջանակներում առաջարկվել է ընդլայնել բնակչության խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական, վերականգնողական ծառայությունները, իրականացնել սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստում /30%/, բարձրացնել հանրային իրազեկման մակարդակը սոցիալական ծրագրերի իրականացման վերաբերյալ, կարողությունների զարգացում, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում, բավարար հիմքերի վրաբարձրացնել համալիր սոցիալական ծառայությունների ներդրումն ու կառավարումը, նյութատեխնիկական բազան և այլն:

2018թ. ևս կշարունակվի զոհված, մահացած զինծառայողների ընտանիքի անդամների և զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային ապահովության հիմնահարցերի լուծման ՀՀ կառավարության ծրագիրը:

2018թ. ոլորտի բյուջեն կազմել է շուրջ 3 100 883.6 հազ..դրամ, որից առաջին կիսամյակում կատարվել է շուրջ 1489,3մլն.դրամի աշխատանքներ:

IV.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՈՒՆ

Գյուղատնտեսության զարգացումը սահմանվել է մարզի 2017-2025թթ. Ռազմավարության հիմնական գերակայություններից մեկը, որի զարգացման ուղղությամբ ինչպես ՀՀ կառավարության, այնպես էլ միջազգային ու տեղական դոնոր կազմակերպությունների, հիմնադրամների և անհատ ներդրողների կողմից կատարվում են անհրաժեշտ քայլեր, ուղղված մեքենա-մեխանիզմների տեխնիկական վերազինմանը,մեքենատրակտերային պարկերի ընդլայնմանը, ժամանակակից ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանը և այլն:

2018թ. ևս նախատեսվում է հիմնել տոհմային անասնաբուծական կենտրոն և հավաբուծական տնտեսություն:

2017թ- ին ՀՀ պետական բյուջեով, ,,Հիմնատավուշ ''զարգացման հիմնադրամի, ՕՔՍՖԱՄ-ի, Համաշխարհային բանկի, Հայաստան Համահայկական Հիմնադրամի, ԵՄ-ի և մասնավոր ներդրումներով մարզում իրականացվել է ավելի քան 3.0 մլրդ դրամի ծրագրեր:

2018թ. նախատեսվել է ավելացնել գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգելի մակերեսը 150հա-ով՝ 2017 թվականի համեմատ:

2018թ. ընթացքում պլանավորվել է նաև աջակցություն ցուցաբերել համայնքապետարաններին և մասնավոր հատվածին մի շարք ներդրումային ծրագրերի կազմման և ներդրողներին ներկայացման գործընթացում, մասնավորապես՝ սպանդանոցի, տոհմային անասնաբուծական տնտեսությունների, սառնարանային տնտեսությունների հիմնում, կաթիլային եղանակով ոռոգման համակարգերի կառուցում, չորանոցների, ջերմատների, և այգիների հիմնում և այլն:

2018թ. Նախատեսվել է համայնքային բյուջեի միջոցներով իրականացնել ոլորտային ծրագրեր՝40.954մլն դրամ արժողությամբ: ***Տարվա ընթացքում պլանավորված է ստեղծել շուրջ 800 հիմնական և ժամանակավոր աշխատատեղեր:***

2018թ. գյուղատնտեսության ոլորտի բյուջեն կազմել է շուրջ **6 413 644.1 հազ դրամ, իսկ առաջին կիսամյակի կատարողականը 3373,4 մլն.դրամ, ստեղծվել է 85 հիմնական աշխատատեղ:**

V. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով շարունակվել է աշխատանքները հետևյալ ուղղություններում՝ <<Դիլիջան>> Ազգային պարկի կառավարման համակարգի կատարելագործում, անտառների կառավարման բարելավում, արոտավայրերի և խոտհարքերի արդյունավետության բարձրացում, արտադրական և կենցաղային թափոնների հավաքման համակարգի տեղադրման, գործող աղբավայրերի բարեկարգում և անհրաժեշտության դեպքում նորերի ստեղծում, համակարգի կատարելագործման աջակցություն:

Նախատեսվել է 2018թ. մարզի համայնքներում աղբահանության ծառայությունների սպասարկման որակի բարելավման նպատակով գտնել լուծումներ աղբարկղների և

մասնագիտացված տեխնիկայի ապահովման ուղղությամբ: Աղբահանություն կատարելու համար իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի թիվը՝01.06.2017թ-ին 492, .31.12.2017թ **1183,** իսկ 31.12.2018թ. նախատեսվում է **1400:**

Ֆիզիկական և իրավաբանական անձանցից հավաքագրված գումարների տեսակարար կշիռը կատարված ծախսերի մեջ 01,01,17թ. **17,6 %,** 31,12,2017թ. **18,2%**

Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն ինքնածախսածածկման եղանակով կատարելու, անհրաժեշտ մակարդակի գանձումներ ապահովելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով համայնքների կողմից կիրականացվեն համապատասխան ուսումնասիրություններ և վերլուծություններ աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ գումարի չափը որոշելու /գանձումների ցուցանիշներ/, այն ապահովելու ռեզերվները բացահայտելու և աղբահանության ու սանիտարական մաքրման աշխատանքների ծավալներն Ընդլայնելու ուղղությամբ:

<<Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ատեղծման աջակցություն>> տարածաշրջանային ծրագրով 2018-2021թթ. Տավուշի և Արարատի մարզերում կիրականացվի<<ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկհամակարգերի կայուն կառավարում և համայնքների կարողությունների հզորացում>> ծրագիրը, որից 2018 թվականին մարզում կիրականացվի շուրջ 25մլն.դրամի ծրագրեր:

2018թ. բնապահպանության ոլորտի բյուջեն կազմել է շուրջ **722.3 մլն. դրամ, որից առաջին կիսամյակում իրականացվել է 294,6մլն.դրամի աշխատանքներ**:

VI. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2018 թվականին քաղաքաշինության բնագավառի հիմնախնդիրները կապված են մարզի ուսումնական հաստատությունների, մշակութային և առողջապահական օբյեկտների կառուցման ու հիմնանորոգման, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, ջրամատակարարման համակարգի բարելավման, զոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման և քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգումը, համայնքների գլխավոր հատակագծերի, շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը քաղաքաշինության ոլորտի զարգացման նպատակներն են:

2018թ. Քաղաքաշինության ոլորտի բյուջեն կազմել է շուրջ **2 495 4մլն. դրամ, որից առաջին կիսամյակում իրականացվել է 1263,4մլն.դրամի աշխատանքներ** :

VII. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

VII.1. Տրանսպորտ և ճանապարհաշինություն

Ճանապարհաշինություն.

Տավուշի մարզն ընդգրկում է 152.6կմ միջպետական նշանակության, 336.8 կմ հանրապետական նշանակության և 300,1 կմ մարզային /տեղական/ նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ:

Մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վիճակը.

	Մարզի և տարածաշրջանների կտրվածքով	Ճանապարհի նշանակությունը	Ճանապարհների վիճակը /կմ/			
			լավ	բավարար	վատ	ընդամենը
5	Մարզի կտրվածքով	Միջպետական	56,5	96,1	-	152,6
		Հանրապետական	115,3	167,5	54,0	336,8
		Տեղական /մարզային/	46,8	13,7	239,6	300,1
	Ընդամենը՝ մարզում		**218,6**	**277,3**	**295,8**	**791,7**

Դիտարկումը ցույց է տալիս, որ հիմնականում վատ վիճակում են գտնվում համայնքներ տանող /մարզային նշանակության/ և ներհամայնքային ավտոճանապարհները:

Աղքատության հաղթահարման տեսանկյունից ճանապարհաշինության ոլորտում իրականացվելիք քաղաքականությունը պետք է ուղղված լինի ճանապարհային ցանցի վերականգնմանը և պահպանմանը:

ՀՀ Տավուշի մարզով են անցնում միջպետական Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման, Մ-6 Վանաձոր -Ալավերդի-Վրաստանի սահման, Մ-8 Վանաձոր Դիլիջան, Մ-16 Մ4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6 միջպետական նշանակության ավտոճանապարհները, որը կազմում է Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 10 %-ը և նշված ավտոճանապարհներով են իրականացվում Վրաստանի Հանրապետությունից ներմուծվող և արտահանվող ՀՀ բեռնափոխադրումների զգալի մասը:Միջպետական ճանապարհների մինիմալ և առավելագույն թողունակությունները՝ 1500-3000 մեք/օր:

2018թ. մարզի համայնքային բյուջեների հաշվին նախատեսված էր իրականացնել շուրջ 88.913 մլն դրամ գումարի ճանապարհաշինական աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ՝2018թ.-ի ունեցած տվյալների համաձայն, մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը կազմում է **2 427.7 մլն. դրամ, որից առաջին կիսամյակում իրականացվել է 927,7մլն.դրամի աշխատանքներ**

Տրանսպորտ

Մարզում գործում են 13 ներմարզային երթուղիներ, որոնք սպասարկվում են 3 ուղևորատար կազմակերպությունների կողմից, որոնց սպասարկմանն ընդգրկված են 22 տրանսպորտային միջոց:

Կանոնավոր սպասարկվում են Իջևան - Երևան, Իջևան – Վանաձոր, Դիլիջան - Երևան, Նոյեմբերյան – Վանաձոր, Դիլիջան – Վանաձոր, Բերդ - Վանաձոր ավտոբուսային և միկրոավտոբուսային միջմարզային երթուղիները:

Ներքաղաքային երթուղիների սպասարկում իրականացվում է Իջևան և Դիլիջան քաղաքներում:

Մարզի չսպասարկվող համայնքներում հասարակական տրանսպորտի աշխատանքի կարգավորման ուղղությամբ՝ համագործակցելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, մարզի մի շարք համայնքների ղեկավարների, համայքներում համապատասխան տրանսպորտային միջոցներ և որակավորում ունեցող անհատների հետ մարզի թվով 12 բնակավայրերում կարգավորվել է հասարակական տրանսպորտով երթուղիների /ոչ կանոնավոր բնույթի/ սպասարկումներ: Չսպասարկվող բնակավայրերի տեսակարար կշիռը բնակավայրերի ընդհանուր թվի մեջ 2016թ կազմել է 37%, 2017թ. 25%: 2018թ.-ին սպասարկվող բնակավայրերի քանակը կավելանա 4 ով:

VII.2 Խմելու ջրամատակարարում և ջրահեռացում

Մարզի բնակչության խմելուջրամատակարարման և ջրահեռացման բարելավումը ոլորտի զարգացման գերակայություններից է:

2018թ. ընթացքում ինչպես համայնքային բյուջեով այնպես էլ տարբեր ներդրումային ծրագրերով շարունակվել են իրականացվել համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքներ: Մասնավորապես նմանատիպ աշխատանքներ են իրականացվել ինչպես Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի այնպես էլ այլ դոնորների միջոցներով:

2018թ. Նախատեսվել է համայնքային ֆոնդային բյուջեի միջոցներով իրականացնել շուրջ 48 493.0հազ դրամ արժողությամբ աշխատանքներ:

2018թ. ոլորտի բյուջեն կազմում է շուրջ **126,9 մլն. դրամ, որից առաջին կիսամյակում իրականացվել է 53,3մլն.դրամի աշխատանքներ**:

VII.3. Գազամատակարարում

ՀՀ Տավուշի մարզը հանրապետության ամենագազիֆիկացված մարզերից է: Մարզի 62 բնակավայրերից 59-ը գազիֆիկացված են: դեռևս չգազիֆիկացված են մնացել Բերքաբեր, Կիրանց և Աճարկուտ համայնքները, որտեղ բնակվում է մարզի բնակչության 0.8%-ը:

2018թ. նախատեսվում է իրականացնել 170201.0հազ.դրամի ընթացիկ և կապիտալ վերանորոգման, ինչպես նաև ներքին ցանցի ընդլայնման աշխատանքներ:

2018թ. ոլորտի բյուջեն կազմում է շուրջ **170 201.0հազ դրամ, որից առաջին կիսամյակում իրականացվել է շուրջ 101,7մլն.դրամի աշխատանքներ:**

VII.4. Էներգետիկա

Էնեգետիկայի ոլորտի զարգացման նպատակներից է շենքեր-շինությունների, փողոցային լուսավորության և տաբեր նշանակության օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության մակարդակի բարձրացումը: Հատկանշական է 2017թվականի տարեվերջին <<Ապագա Ռեզորթ>> ՍՊԸ-ի կողմից կառուցված արևային էլեկտրակայանը, որտեղ ներդրվել է շուրջ 67 մլն.դրամ:

2018թ. Մարզում կշարունակվել են, արևային /ֆոտովոլտային/ էլեկտրակայանների և ջրատաքացուցիչների տեղադրման, ինչպես նաև ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի շրջանակներում էներգախնայող վառարանների տեղադրման ծրագրեր:

2018թ. Նախատեսված է համայնքային բյուջեի միջոցներով իրականացնել ոլորտային ծրագրեր՝ 119.6 մլն դրամ արժողությամբ:

2018թ. ոլորտի բյուջեն կազմում է շուրջ **410,8 մլն. դրամ, որից առաջին կիսամյակում իրականացվել է 213,1մլն.դրամի աշխատանքներ:**

VIII. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարզի երրորդ ռազմավարական նպատակն է՝մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացումը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավումը:

ՀՀ Տավուշի մարզպետարանի և մարզի համայնքապետարանների աշխատակազմերի պարտադիր վերապատրաստումները համարվում են կարողությունների զարգացման շարունակական գործընթացներ:

2018թ. համար նախատեսվել է մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ սուբյեկտների թվի առնվազը 30%-ի չափով:

2018թ. Տարածքային կառավարման ոլորտի առաջնահերթություններն են եղել.

-Տարածքային կառավարման նոր օրենսդրության մշակմանը ակտիվ մասնակցությունը,

-Մարզային և տեղական դերակատարների կարողությունների հզորացման նպատակով վերապատրաստումների կազմակերպումը,

-Հանրապետական միջոցառումներին մարզի ներկայացուցիչների մասնակցության ապահովումը.

-Մարզպետարանի աջակցությամբ կամ ուղղակի գործողություններով մարզում կատարված ներդրումների ծավալի ավելացումը,

-Մարզում չօգտագործվող պետական և համայնքային գույքի հաշվառումը, ըստ պիտանելիության աստիճանի դասակարգումը և իրականացվելիք ծրագրերի համար որպես արտադրական և գրասենյակային տարածքներո գտագործելու համար սեփականատերերի հետ քննարկումների կազմակերպումը:

2018թ. Տեղական ինքնակառավարման ոլորտի առաջնահերթություններ են.

-Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպումը,

-Նոր ձևավորված համայնքների աշխատակազմերի կարողությունների հզորացումը,

-Նոր ձևավորված համայնքների բյուջեների, զարգացման ծրագրերի և ՏԱՊ-երի մշակումը:

-Ունենալ դիմակայում համայնքներ, վերապատրաստված և արտակարգ իրավիճակում գործելու հմտություններով օժտված տարածքային և համայնքային մասնագետներ:

-Հետևել կին-տղամարդ հավասարակշռվածությանը:

-Իրականացվող բոլոր ծրագրերում ուշադրություն դարձնել ԱՌՆ խնդիրներին:

2018թ. սկսվեց համայնքների վարչական տվյալների շտեմարանների կազմման գործընթացը, որը սահմանված կարգով մշակվեց և ներկայացվեց Հհ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

2018 թվականին 2017 թվականի համեմատ պլանավորվում է մեկ շնչին ընկնող համայնքների սեփական եկամուտների աճ 15%-ով:

2018թ. ևս շարունակվել է համագործակցությունը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ հասարակական, միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, համայնքային միավորումների հետ:

2018թ. ՀՀ պետական բյուջեից մարզպետարանի պահպանման համար նախատեսվել է 513096,0 հազ.դրամ: Ոլորտի 2018թ. բյուջեն կազմում է **3 817 6 մլն..դրամ, որից առաջին կիսամյակում իրականացվել է 1675,7մլն.դրամի աշխատանքներ**:

IX. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ 2018Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2018 թվականին ՀՀ Տավուշի մարզի գործունեության ծրագրի բոլորոլ որտների պահանջվող ֆինանսավորումը կազմում է 30 471 669.9հազ.դրամ , որից առաջին կիսամյակում իրականացվել է 12 638,3 մլն.դրամի աշխատանքներ:

ՄԱՐԶՊԵՏ Վ.ՂԱԼՈՒՄՅԱՆ